ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-25/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հ.Մարտունի

26.02.2024թ.

10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը ,անդամներ՝ Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ. Դավթյանը, քարտուղար ՝ Կ. Սիմոնյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-25/05» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ** հայտում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Գնահատման արդյունքում մասնակցին տրված գնահատականները

Չափաբաժին 1

Հ/Բ	Մասնակցի անվանում	Մասնագիտական փորձառություն	Աշխատանքային ռեսուրսներ	Գնային պայման	Մասնակցին տրվող գնահատական
1	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ	40	30	30	42
2	«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ » ՍՊԸ	40	30	23.1	37.17

3.1 Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.2 «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-25/05» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել **«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ -Ն**, որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.4 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում կանխիկ փողի տեսքով կամ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային երաշխիքի տեսքով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ՝ _____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ.Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան